

ՀԱՅԱՍՏԱՆԻՍ ՕՐԻՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ

ԱՌԿԱՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ

ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ՝

ՆԱՐԻՆԵ ՄԱՅԻՆՅԱՆ

ԼԵՆՆԱՐՏ ԼԵՀՄԱՆ

ԹԱՍԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կայքերի մոնիտոր՝

ՆԱԻՐԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ձևաորող՝

Էդուարդ Սիմոնյան

ԵՐԵՎԱՆ

YEREVAN

2013

«Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի և DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում՝

«Արագ» ԲՀԿ միջոցով:

Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Արագ» ԲՀԿ պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒ Ն

Ա.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատման նպատակնու խնդիրները
Գնահատման մեթոդաբանությունը

Բ.ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Օրինաստեղծ գործընթացում հանրության մասնակցության օրենսդրական կարգավորումը
Կենտրոնական Եվրոպայի, Մերձբալթյան երկրներում և Հայաստանում
Օրինագծերի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու ընթացակարգերը Կենտրոնա-
կան Եվրոպայում, Մերձբալթյան երկրներում և Հայաստանում
Օրինագծերի հանրային լսումների և խորհրդակցությունների մասին տեղեկացման ժամա-
նակացույցը Կենտրոնական Եվրոպայի, Մերձբալթյան երկրներում, Հայաստանում
Հանրության օրենսդրական նախաձեռնության իրավունքը Կենտրոնական Եվրոպայի,
Մերձբալթյան երկրներում և Հայաստանում
Քաղաքացիական հասարակության իրազեկման գործող համակարգը Հայաստանում

Գ.ԿԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում օրինաստեղծ գործընթացում մասնակցային համակարգի առկա վիճակը
Խնդիրներ/մարտահրավերներ
Առաջարկություններ

Դ.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներում օրենքների ընդունման գործընթա-
ցում ԲՀԿ-ների ներգրավման ցանցային (ambrela)կազմակերպությունների փորձի ուսում-
նասիրության հարցման մանրամասն պատասխանները
Հետազոտության արդյունքներնամփոփող 3 ֆոկուս խմբային քննարկումների արձանա-
գրությունը

Օգտագործված հապավումները

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԱՀՈԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄՆ ՄՁԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԲՀԿ	Բարեգործական հասարակական կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՄ	Եվրամիություն
ԵՄԽԽՀ	Հայաստանում Եվրամիության խորհրդատվական խումբ
ՈԻՕ+20	ՈԻՕ+20 ՀՀ Ազգային զեկույցը 1992թ-ին Ռիո դե Ժանեյրոում կայացած միջազգային համաժողովի ավարտին ընդունած հռչակագրի կատարման մասին
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ԿԶԾ/ՀԶԾ ՍԳ	Կայուն զարգացման ծրագրի/Հեռահար զարգացման ծրագրերի Սոցիալական գործընկերություն
ԿԶԾ/ՀԶԾ ՔՀՑ	Կայուն զարգացման ծրագրի/Հեռահար զարգացման ծրագրի քաղաքացիական համագործակցության ցանց
ՀԶԾ	Հեռահար զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռիո դե ժանեյրոում 1992թ-ին կայացած «Միջավայրի և զարգացման մասին» ՄԱԿ-ի համաժողովը կարևոր քայլ էր՝ ուղղված հանրային մասնակցության՝ որպես մարդկային իրավունքի ճանաչմանը: Համաժողովի ավարտին ընդունած ՀՌՉԱԿԱԳՐՈՒՄ շեշտված է պետությունների կարևոր դերը հանրային մասնակցության խթանման գործում և ներկայացված էարժանահավատ տեղեկատվության հասանելիությունն ապահովելու պահանջ:

Համաձայն ՌԻՕ+20¹ 2012թ-ի ՀՀ Ազգային Ձեկույցի՝ երկրում մասնակցային կառավարման համակարգի կայացման նպատակով կառավարությունն ազգային և տեղական մակարդակներում ստեղծել է բավարարիչ ավական հիմքեր կուրջին ստիտուցիոնալ հարթակներ, սակայն վերջինների արդյունավետությունը որոշումների կայացման գործընթացում ցածր է: Պետական կառավարման մարմինները գտնում են, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) պասիվ են և չեն կարողանում լավագույնս օգտագործել ընձեռնված հնարավորությունները: Մինչդեռ ՔՀԿ-ների կարծիքով իրենց ծեռքերում ները համար ժեք են ներդրված ջանքերին, որը պայմանավորված է միջարք լուրջ հիմնախնդիրներով, որոնցից հիմնական-ներն են՝

- որոշումների կայացման գործընթացներին ՔՀԿ-ների ներգրավման և հանրության լայն շրջանակների մոբիլիզացման ցածր մակարդակ,
- շահագրգիռ կողմերի միջև վաղաժամ իրազեկման և տեղեկատվության փոխանակման հստակ մեխանիզմի բացակայություն:

Օրենքները ընդունման գործընթացի բոլոր փուլերում ՔՀԿ-ների և հանրության մասնակցությունը երաշխավորող իրավական հիմքերն ամրագրված են ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքում, «Տեղեկատվության մասին», «Իրազեկման մասին» ՀՀ օրենքներում, նախարարությունների կողմից հանրական կարգերում, ՀՀ ԱԺ-ի և «Հանրային ցանցի» միջև ստորագրված հուշագրում և այլ նմանատիպ փաստաթղթերում: Սակայն քաղաքացիական հասարակության փորձը ցույց է տալիս,

որ մասնակցային հիմն ստիտուտներում ներգրավված սուբյեկտները, այդ թվում նաև ՔՀԿ-ները, իրապես գրեթե հնարավորություն չունեն լուրջ ազդեցություն ունենալու որոշումների կայացման գործընթացի վրա: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ շահագրգիռ կողմերին պետական քաղաքականությունն ամրագրող ռազմավարական փաստաթղթերի նախագծերի, օրինագծերի մասին իրազեկման ժամանակացույց գոյություն չունի և դրանք հաճախ հրապարակվում են քննարկումից 2-5 օր առաջ: Այդ ժամկետը բավարար չէ փաստաթղթերին մանրամասն ծանոթանալու և քննարկմանը պատրաստված ներկայանալու համար: Արդյունքում մեծ մասով քննարկումների արդյունավետությունը:

Օրինագծի հեղինակները՝ համապատասխան նախարարությունները, ՀՀ ԱԺ-ի պատգամավորները, որպես կանոն, հանրության իրազեկման միջոց են ծառայեցնում համացանցը: Նույն կերպ են վարվում նաև հետազոտական կազմակերպություններն ու հանրության տարբեր խմբերի շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցները: Մինչդեռ համաձայն «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ Սամվել Մարտիրոսյանի տեղեկատվության՝ ինտերնետը հասանելի է Հայաստանի բնակչության մոտ 47,1%-ին, (17.05.2012 ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԻՆՏԵՐՆԵՏ-ՕԳՏԱՏԻՐՈՋ ՊԱՏԿԵՐԸ հոդվածում)², իսկ ՔՀԿ-ների միայն 30-40%-ին (դիտարկվել են ծրագրի շահառու 500 ՀԿ-ները որոնց մոտ 200-ն ունեն սեփական կապի միջոց, մյուսները, մասնավորապես մարզային ՀԿ-ները, ինտերնետից օգտվելու համար պարբերաբար հաճախում են ռեսուրս կենտրոններ կամ ինտերնետ սրճարաններ): Արդյունքում հանրությունը բավարար տեղեկացված չէ քննարկման փուլում գտնվող օրինագծերի մասին, որը բացասաբար է անդրադարձնում օրինաստեղծ գործընթացին ՔՀԿ-ներին քաղաքացիների մասնակ-

¹ ՌԻՕ+20 ՀՀ Ազգային զեկույց 1992թ-ին Ռիո Դե ժանեյրոյում կայացած միջազգային համաժողովի ավարտին ընդունած հռչակագրի կատարման մասին

² www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID, www.panarmenian.net/arm/details/139663/

ցության արդյունավետության վրա և, որպես հետևանք, նվազեցնում նրանց մոտիվացիան ու ակտիվության մակարդակը:

Գնահատման նպատակն ու խնդիրները

Սույն հետազոտության նպատակն է նպաստել օրինաստեղծ գործընթացում առկամասնակցային համակարգի արդյունավետության բարձրացմանը: Ջեկույցի նյութը կներկայացնի հետևյալ հարցերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքները՝

1. Օրինաստեղծ գործընթացներում Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրների ՔՀԿ-ների ներգրավման և մոբիլիզացման փորձը,
2. Հայաստանում օրինաստեղծ գործընթացներին ՔՀԿ-ների մասնակցությունը կանոնակարգող համակարգի կիրառելիությունը,
3. Օրինաստեղծ գործընթացների վերաբերյալ հանրության վաղաժամ իրազեկման և պետական կառույցների և ՔՀԿ-ների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի առանձնահատկությունները Հայաստանում,
4. Օրինաստեղծ գործընթացներին Հայաստանում ՔՀԿ-ների մասնակցության և իրազեկման համակարգի բարելավմանը միտված առաջարկություններ:

Ուսումնասիրության նյութն է՝

5. Հայաստանում օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության համար առկա իրավական և ինստիտուցիոնալ հնարավորությունները, հանրության իրազեկման գործող համակարգը,
6. Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրների փորձը:

Ջեկույցում ներկայացված գործող մասնակցային համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունները պատկան կառույցների կողմից ընդունվելու դեպքում հնարավորություն կտան հանրային հնչեղություն ունեցող օրինագծերի մշակման և ընդունման գործընթացում ակտիվացնել հանրության շահագրգիռ խմբերի մասնակցությունը, երաշխավորել սոցիալական տարբեր խմբերի շահերի պատշաճ ներկայացումն ու ներդաշնակեցումը: Առաջարկությունների ընդունման դեպքում կկատարելագործվեն՝

- օրինաստեղծ գործընթացներում ՔՀԿ-ների ներգրավման իրավական հիմքերն ու դրանց կիրարկման մեխանիզմները,
- օրինաստեղծ գործընթացների վերաբերյալ հանրության վաղաժամ իրազեկման և պետական կառույցների և ՔՀԿ-ների միջև տեղեկատվության փոխանակման առկա համակարգերը,
- օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության արդյունավետությունը:

Գնահատման մեթոդաբանությունը

2012թ-ին նյութերից մինչև 2013թ-ին արտոն ընկած ժամանակահատվածում մշտադիտարկման են ենթարկվել ՀՀ ԱԺ-ի և 18 նախարարության կայքերը: Միաժամանակ, օրակարգում գտնվող օրենքների ընդունման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է և տրամադրվել ՔՀԿ-ներին:

Ջուզահեռաբար ուսումնասիրվել է Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներում օրենքների ընդունման գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման փորձը և համադրվել Հայաստանում գործող մասնակցային համակարգի հետ: Ուսումնասիրության համար ընտրվել և կիրառվել են հետևյալ միջոցները.

1. *Փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն*

Ուսումնասիրվել են քաղաքականությունների մշակման գործընթացում հանրային մասնակցության մասնակցականորեն առնչվող միջազգային և ազգային փաստաթղթերը,

- ա. 1990թ-ի հունիսի 7-ին ընդունված «Միջավայրի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման մասին» ԵՄ որոշումը,
- բ. 2012թ. հունիսի 23-ին Ռիո դե Ժանեյրոյում կայացած ՄԱԿ-ի «Միջավայրի և զարգացման մասին» կոնֆերանսի նյութերը
- գ. 1998թ. հունիսի 25-ին «Միջավայր Եվրոպայի համար» 4-րդ նախարարական կոնֆերանսի ընդունած Օրհուսի կոնվենցիան,
- դ. «Տեղական իշխանությանը մասնակցելու մասին» Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը,
- ե. Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը,
- զ. 2008թ. նոյեմբերի 20-ին ընդունված «Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր» թիվ 1/147 ՀՀ կառավարության արձանագրային որոշումը,
- է. 2008թ. նոյեմբերի 20-ին ընդունված «Օրինակելի իշխանության կարգ» ՀՀ վարչապետին կից կոլեգիայի նիստի թիվ 1/147 արձանագրային որոշումը,
- ը. ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը,
- թ. 2009թ. օգոստոսի 4-ին կառավարության թիվ 657-Ն որոշմամբ հաստատված ԿԶԾՍԳ համաձայնագիրը,
- ժ. «Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքը,
- ի. 2012թ-ի ապրիլի 5-ին ընդունված «Իրավական ակտերի մշակման մեթոդաբանական ցուցում» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

2. *Քաղաքացիական տեղեկատվության հավաքագրում:*

Ուսումնասիրվել է Հունգարիայի, Սլովակիայի, Չեխիայի, Լեհաստանի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի և Հայաստանի փորձը՝ օրենքների ընդունման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության վերաբերյալ՝ հետևյալ հարցախույզով. (համացանց և եվրոպական գործընկերակազմակերպությունների հղված հարցաշարերի պատասխանների հավաքագրման միջոցով)³

- ա. Ինչպիսի՞ մեխանիզմներ են կիրառում Կենտրոնական Եվրոպայի երկրները և Հայաստանը հանրությանն օրինաստեղծ գործընթացում ներգրավելու համար,
- բ. Ինչպիսի՞ ընթացակարգեր են կիրառվում օրինագծերի ներկա վիճակի և կայանալիք հանրային լսումների մասին տեղեկատվությունը տարածելու համար,
- գ. Ինչպե՞ս է օրենսդրությունը կանոնակարգում հանրության մասնակցությունը և ներգրավվածությունը օրենքների և որոշումների ընդունման գործընթացում,
- դ. Ինչպիսի՞ն է օրինագծերի ներկա վիճակի, կայանալիք հանրային լսումների, խորհրդակցությունների մասին տեղեկատվության տարածման ժամանակացույցը,
- ե. Արդյո՞ք հանրությունն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք:

³Milan Andrejkovic, 1.SNSC, Slovakia, contact: andrejkovic@1snsc.sk

Marek Zoltowski, Ogólnopolska Federacja Organizacji Pozarządowych (OFOP), Poland; contact: marek.zoltowski@ofop.eu; www.ofop.eu,

Eszter Simor, Nonprofit Információs és Oktató Központ Alapítvány (NIOK), Hungary; contact: e.simor@niok.hu; www.niok.hu

Marek Sedivy, President of Association of Public Benefit Organizations (AVPO), Czech Republic; contact: sedivy@avpo.cz ;www.avpo.cz

3. Հայաստանում առցանց տեղեկատվության տարածման և ՔՀԿ-ների վաղաժամ իրազեկման գործող համակարգի գնահատում:

Օրինաստեղծ գործընթացի մասին տեղեկատվության տարածման և հանրության վաղաժամ իրազեկման գործող համակարգի արդյունավետության չափանիշեր են ընտրվել հանրային կարևորություն ունեցող օրինագծերի, օրենքների ընդունման ժամանակացույցի, քննարկման օրակարգի վերաբերյալ գետեղվող տեղեկատվության առկայությունը, ծավալն ու որակը:

Գնահատման նպատակով մշտադիտարկվել են համապատասխան պետական մարմինների պաշտոնական կայքերը, գրավոր կամ առցանց գրություններն են հղվել վերոնշյալ պաշտոնական կայքերը սպասարկող, օգտագործվել է կայքերում նախատեսված հետադարձ կապը, տեղեկատվություն է հավաքագրվել հարց ու պատասխանի և բաժանորդագրության ռեժիմով, կատարվել են հեռախոսազանգեր: Հարկ է նշել, որ տարբեր պետական կառույցների և հետազոտական ու ՔՀԿ-ների կայքերը և բովանդակային, և սպասարկման ու թարմության առումով բավականին տարբեր են:

Գնահատումն իրականացվել է նաև նախարարությունների, ԱԺ պատգամավորների, փորձագետների և ՔՀԿ ներկայացուցիչների շրջանում էլեկտրոնային հարցման միջոցով՝ ձևայնացված հարցերով: Տվյալների հավաստիությունն ապահովելու համար կիրառվել է յուրաքանչյուր թիրախյախմբի առնվազն 10%-ի համաչափ ներգրավման պարտադիր պայմանը: Սահմանափակ ռեսուրսների պատճառով հարցումն իրականացնել է էլեկտրոնային եղանակով: Հարցման եղանակը ներթիվս հենվել ենք «Հանրային ցանցի» և «Արագ» ԲՀԿ-ի՝ պետական կառույց-ներին ուղղված պաշտոնական գրություններին արձագանք ստանալու 90%-ի հասնող փորձի վրա: Հարցման արդյունքում ստացել ենք պետական կառույցների ներկայացուցիչների 10%-ի, իսկ ՔՀԿ-ների՝ 15%-ի արձագանքը, որը կարող է առցանց աշխատանքի արդյունավետության գնահատման ցուցանիշ համարվել:

Հարցման արդյունքների վերլուծության ժամանակ տվյալների ճշգրտման և մեկնաբանությունների համար իրականացվել են հեռախոսազանգեր հարցախույզի մասնակից անձանց: Հեռախոսազանգերի միջոցով պարզվեց, որ հարցվողներից մասնաճյուղ հարցերը տարբեր կերպ են ընկալվել, որնիր արտացոլումն է գտել ամփոփ արդյունքներում:

Բ. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գնահատումն իրականացնելու նպատակով 2012թ-ի նոյեմբերամսից մինչև 2013թ-ի մարտի վերջը կատարվել է հանրային կարևորություն ունեցող օրինագծերի, օրենքների ընդունման ժամանակացույցի, քննարկման օրակարգի վերաբերյալ տեղեկատվություն գետեղող նախարարությունների և ՀՀ ԱԺ-ի կայքերի մշտադիտարկում: Մշտադիտարկման ընթացքում գնահատվել են գետեղված տեղեկատվության մատչելիության աստիճանը և առկա տեղեկատվական համակարգի հնարավորությունները:

Կայքերի տևական մշտադիտարկումը թույլ է տվել արձանագրել, որ դրանք առավել արդյունավետ են գործում ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սփյուռքի նախարարություններում: Միաժամանակ, կարելի է արձանագրել, որ կայքերի այցելուների կարծիքի համաձայն արագ և դրական տեղաշարժ է նկատվում նախարարությունների կայքերի սպասարկման հարցում: Նույնանման գնահատական է տվել նաև «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ-ն: «Արմենպրես»-ի փոխանցմամբ այդ գնահատականի օգտին են վկայում վերոնշյալ կազմակերպության կողմից 2012թ. օգոստոսի 1-ից նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում 52 պետական գերատեսչության կայքերի մշտադիտարկման արդյունքները: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի գնահատականի համաձայն կայքերի համեմատական բարձր որակով առանձնանում են ՀՀ տարածքային կառավարման և ՀՀ արդարադատության նախարարությունները: Կայքերի մշտադիտարկման արդյունքում բացահայտվել է, որ թե՛ նախարարությունների, թե՛ ՀՀ ԱԺ-ի կայքերը մատչելիության առումով ունեն որոշակի խնդիրներ: Այսպես օրինակ՝ անհրաժեշտ տեղեկատվությունը փնտրելն ու գտնելը խրթին է: Նախարարությունների և ՀՀ ԱԺ-ի օրակարգում ընդգրկված օրինագծերը թե նախարարությունների և թե ՀՀ ԱԺ-ի կայքերում նույնիսկ գտնելու դեպքում որոշակի խնդիրներ են առաջանում՝

դրանց կարգավիճակի, հանրային քննարկումների և լսումների ժամանակացույցի, օրակարգի մասին տեղեկատվության առնչությամբ:

Տարածքային կառավարման, Սփյուռքի, Կրթության և գիտության, Արտաքին գործերի նախարարությունների կայքերն ունեն նորություններին բաժանորդագրվելու հնարավորություն, որը վերը նշված խնդիրների լուծման, ինչու չէ, նաև, ժամանակի տնտեսման արդյունավետ միջոց է:

ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքի սահմանած կարգի համաձայն խորհրդարանական լսումների մասին տեղեկատվությունը տարածվում է լրատվամիջոցներով և տեղադրվում է կայքում ընդամենը 3 օր առաջ: Նույն կարգն է գործում ՀՀ ԱԺ-ի մշտական հանձնաժողովների նիստերի ժամանակացույցի, օրակարգի մասին տեղեկատվության տրամադրման համար: Նույն ժամկետը պահպանվում է նաև հանրային քննարկումների կազմակերպման դեպքում:

Պատահել է, երբ տեղեկատվությունը կայքում տեղադրվել է մեկ օր առաջ օրինակ՝ ՀՀ ԱԺ-ի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում ապրիլի 5-ին կայանալիք նիստը ապրիլի 4-ին տեղափոխելու մասին հայտարարությունը տեղադրվել է ապրիլի 3-ին: Քննարկվելու էին «Բազմազավակ ընտանիքների աջակցության եւ բազմազավակ մայրերի պետական խրախուսման մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին հանրային կարևորություններ կայացնող նախագծերը:

Մշտադիտարկման ժամանակահատվածում արձանագրել է ևս մեկ դեպք, երբ կայանալիք նիստի մասին հայտարարությունը կայքում տեղադրվել է մեկ օր անց, դա ՀՀ տարածքային կառավարման նախարարության՝ դեկտեմբերի 15-ին կայանալիք կոլեգիայի նիստի մասին տեղեկատվությունն էր, որ կայքում տեղադրվել էր դեկտեմբերի 16-ին:

Քննարկման թեմաներն են եղել՝

1. «ՀՀ տեղական ինքնակառավարման հետազա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումները»,
2. «Հայ-ռուսական միջտարածաշրջանային II համաժողովի արդյունքների ամփոփում, նոր՝ III համաժողովի կազմակերպման առաջարկները»:

Ինչպես հայտնի է՝ պաշտոնական կայքերը սպասարկում են պետական կառույցների հանրային կապերի ստորաբաժանումները: Տեղեկատվության հրապարակման ժամկետների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով հեռախոսազանգեր են արվել հանրային կապերի բաժիններին: Պատասխանը հետևյալն է. գերհագեցած աշխատանքային գրաֆիկով և մինչև վերջին պահը օրինագծերի վրա աշխատելու անհրաժեշտությամբ թելադրված քննարկումների թե՛ ժամանակացույցը, թե՛ օրակարգը ուշ են հստակեցվում և ստորաբաժանմանը տրամադրվելուն պես տեղադրվում են կայքում:

Այսպիսով, վաղաժամ իրազեկման խնդիրը վերաբերվում է բոլոր պետական կառույցներին, և կարելի է եզրակացնել, որ խնդիրը արմատական լուծման կարիք ունի:

Կայքերի մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ 2013թ-ի մարտի վերջի դրությամբ նախարարությունների կոլեգիաների գործունեությունը 2011թ-ին իրականացված հետազոտության արդյունքների համեմատությամբ որոշ հետընթաց է արձանագրել: Այդ է վկայում կոլեգիաների կազմի, նիստերի ժամանակացույցի, արձանագրությունների մասին տեղեկատվության բացակայությունը: Համապատասխան հեռախոսազանգերի միջոցով ձշտվել է, որ հատկապես վերջին 6 ամսվա ընթացքում որոշ նախարարություններում կոլեգիայի նիստեր չեն գումարվել:

Պետք է նշել, որ մշտադիտարկումը ստիպում է պետական կառույցներին տեղեկատվությամբ հարուստ կայքեր պատրաստել և մրցել միմյանց հետ: Պետական գերատեսչությունների կայքերի հանդեպ հանրության, մասնավորապես, ՔՀԿ-ների պահանջարկը և ակտիվ օգտագործումը կարող է լուրջ խթան հանդիսանալ դրանց որակականաճի համար:

Ուսումնասիրության միջազգային շրջանակը

Ստորև ներկայացված է Կենտրոնական Եվրոպայի, Մերձբալթյան երկրներում և Հայաստանում որոշումների կայացման գործընթացում մասնակցային փորձի ուսումնասիրության արդյունքը: Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներն ընտրված են դրանց անցած ճանապարհի, Հայաստանի ներկայիս անցումային շրջանի հետ ակնհայտ նմանությունից ելնելով: Ուսումնասիրությաննպատակն էր դիտարկել օրինաստեղծ գործընթացում հանրության մասնակցությունն ապահովող գործիքները Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներում՝ դրանք Հայաստանում կիրառվողների հետ համադրելու համար: Այդ համադրումը կարող է Հայաստանում մասնակցային մեխանիզմների և գործիքների հետագա զարգացմանը նպաստող նոր գաղափարների աղբյուր դառնալ:

Համադրելի արդյունքներ ստանալու համար ուսումնասիրությունը կենտրոնացել է հետևյալ հինգ հարցերի վրա.

- I. Ինչպիսի՞ մեխանիզմներ են կիրառում Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրները նպաստելու համար ՔՀԿ-ների մասնակցությանը օրինաստեղծ գործընթացին:
- II. Ինչպիսի՞ ընթացակարգեր է կիրառում ՀՀ կառավարությունը քննարկման մեջ գտնվող օրինագծերի, դրանց ներկա վիճակի և նախատեսվող հանրային քննարկումների և լսումների մասին տեղեկատվությունը տարածելու համար:
- III. Ինչպե՞ս է օրենսդրությունը խթանում հանրության մասնակցությունը:
- IV. Ի՞նչ ժամկետներում է կառավարությունը պարտավոր տեղեկացնել հանրությանն օրինագծերի հանրային լսումների, բաց քննարկումների մասին:
- V. Ունի՞ արդյոք հանրությունն օրենսդրական նախաձեռնության իրավունք:

Առաջադրված հարցերի պատասխանը ստանալու նպատակով ուսումնասիրությունը հենվել է մի շարքայնպիսի հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետազոտությունների արդյունքների վրա, ինչպիսիք են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), Հայաստանում Եվրամիության խորհրդատվական խումբ (ԵՄԽՍՀ) և այլք: Քանի որ Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրները գտնվում են Եվրամիությանը լիարժեք ինտեգրվելու շրջանում, ապա ակնհայտ է թարմացված տվյալներունենալու անհրաժեշտությունը: Այդ նպատակով հարցումներ են իրականացվել Լեհաստանի, Սլովակիայի, Հունգարիայի, Չեխիայի և Մերձբալթյան երեք երկրների ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում:

1. Քաղաքականության մշակման գործընթացում հանրային մասնակցությանն առնչվող հիմնական միջազգային համաձայնագրերը

Ստորև բերված են հանրային մասնակցության միջազգայնորեն ճանաչված գաղափարի ձևակերպումը, հասկացությունները, հիմնական միջազգային համաձայնագրերի դրույթները:

«Ժողովրդավարությունն ավելին է, քան՝ ընտրությունները, քաղաքական կուսակցություններն ու անհատի իրավունքների պաշտպանությունը: Դա հանրության առջև մշտապես հաշվետու քաղաքականության ձևավորման գործընթաց է: Քանի որ քաղաքականությունը մշակում են կառավարությունն ու պաշտոնյաները, չափազանց կարևոր է, որպեսզի որոշում կայացնելիս նրանք ականջալուր լինեն շահագրգիռ անհատների, ընկերությունների և կազմակերպությունների մտահոգություններին:»⁴

«Քաղաքականության մշակման նախնական փուլում հանրության հետ ծավալուն խորհրդակցությունները չափազանց օգտակար կարող են լինել, օրինակ՝ ՏՀԶԿ-ն, ի թիվս այլոց, թվարկում է հետևյալ օրինակները. որոնք կարող են.

- ա. են ընդլայնել քաղաքականության այլընտրանքների ցանկը,
- բ. հեշտացնել որոշանհրաժեշտ տվյալների հավաքագրումը,
- գ. ծառայել ավարտուն վերլուծությունների արդյունքների ճշգրտման միջոց,

⁴ Rose-Ackerman 2005

- դ. նպաստել կանոնակարգման ենթակա գործընթացների և լուծման կարիք ունեցող հիմնախնդիրների լիարժեք ընկալմանը,
- ե. նպաստել համապատասխան իրավական մեխանիզմների առավել տեղեկացված ընտրությանը,
- զ. նպաստել առավել ընկալելի իրավական լուծումների ընտրությանը,
- է. նպաստել առավել նպատակային կանոնակարգային լուծումների ընտրությանը,
- ը. հանգեցնել օրենսդրական տեքստերի հստակեցմանը, ապահովել դրանց ավելի պարզ շարադրանքը,
- թ. կառավարությանն ավելի ուշադիր դարձնել թիրախ խմբերի կարիքներին և շահերի հանդեպ,

Նշված դիտարկումները հուշում են, որ շատ դեպքերում խորհրդակցությունները մեծ դրական ազդեցություն կունենան, եթե տեղի ունենան, երբ քաղաքականությունը դեռևս մշակման փուլում է:»⁵

Հանրային մասնակցությանն առնչվող հիմնական միջազգային համաձայնագրերն են.

- ❖ «Միջավայրի մասին տեղեկատվության հասանելիության ազատության մասին» 1990թ-ի հունիսի 7-ի ԵՄ 90/313 հրահանգը միասնական Եվրոպական օրենսդրության առաջին փաստաթղթերից մեկն է, որն առնչվում է հանրային մասնակցությանը:⁶
- ❖ 1992թ-ին Ռիո դե Ժանեյրոում կայացած «Միջավայրի և զարգացման մասին» ՄԱԿ-ի Կոնֆերանսը ևս կարևորեց հանրային մասնակցության՝ որպես մարդկային իրավունքի ճանաչմանը: Ռիոյի ՀՈՉԱԿԱԳԻՐԸ հատուկ շեշտեց պետությունների դերը հանրային մասնակցության խթանման գործում՝ պարտադրելով ապահովել արժանահավատ տեղեկատվության հասանելիությունը:⁷
- ❖ 1998թ. հունիսի 25-ին Դանիայի Օրիուս քաղաքում «Միջավայր Եվրոպայի համար» գործընթացի շրջանակներում կայացած 4-րդ նախարարական կոնֆերանսի ժամանակ ընդունվել է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան:⁸ Այն բաց է նաև ոչ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար: Ղազախստանը, Հայաստանն ու Մոլդովան վավերացրել են այն:
- ❖ Օրիուսի կոնվենցիայի՝ հանրության մասնակցությանը վերաբերող պահանջներն են.
 - ✓ Շահագրգիռ հանրությունը պետք է ժամանակին և լիարժեք տեղեկացված լինի,
 - ✓ Ժամկետները պետք է հնարավորություն տան հանրային արդյունավետ մասնակցության համար,
 - ✓ Տեղեկատվություն ձեռքբերելը չպետք է հանրությունից ծախս պահանջի,
 - ✓ Որոշում կայացնողները պետք է հաշվի առնեն հանրության կարծիքը,
 - ✓ Որոշումները պետք է հանրայնացվեն ժամանակին, ամբողջական տեսքով և դրանց ազատ անդրադառնալու իրավունքով:

«Տեղական իշխանությանը մասնակցելու մասին» Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը հաստատում է տեղական իշխանության մարմինների աշխատանքներին յուրաքանչյուրի մասնակցելու իրավունքը:⁹

2. «Կենտրոնական Եվրոպայի, Մերձբալթյան երկրներում և Հայաստանում կիրառվող մասնակցային մեխանիզմների առանձնահատկությունները» արագ հարցախույզ

⁵ cited in: Staronova, Mathernova 2003

⁶ <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:31990L0313:EN:HTML>

⁷ <http://www.un.org/documents/ga/conf151/aconf15126-1annex1.htm>

⁸ <http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf>

⁹ <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/207.htm>

Կենտրոնական Եվրոպայի, Մերձբալթյան երկրներում և Հայաստանում մասնակցային գործընթացի մասին ամփոփ պատկերացում կազմելու համար անց է կացվել արագ հարցախույզ: Ստացված պատասխանները համառոտ տեսքով բերված են այնպես, որ հեշտ լինի համադրել դրանք, նկատել օրինաստեղծ գործընթացում հանրության մասնակցության հետ կապված մոտեցումների նմանություններն ու տարբերությունները: Ստացված պատասխանները մանրամասն տեսքով բերված են «Հավելվածում 1»-ում և Հանրային ցանցի կայքում:¹⁰

I. Ինչպիսի՞ մեխանիզմներ են կիրառում Կենտրոնական Եվրոպայի, Մերձբալթյան երկրները և Հայաստանը նպաստելու համար ՔՀԿ-ների մասնակցությանն օրինաստեղծ գործընթացին:

ԷՍՏՈՆԻԱ

- Ձևավորվում է խորհրդարանի անդամներից կազմված խումբ, որը հանդես է գալիս ՔՀԿ-ների համար նպաստավոր օրենսդրական նախաձեռնություններով¹¹:
 - ❖ Նշանակվում են Կառավարության լիազոր պաշտոնյաներ, որոնք պատասխանատու են ՔՀԿ-ների հետ խորհրդակցությունները կազմակերպելու, համակարգելու, մշտա-դիտարկելու համար¹²:
 - ❖ Նշանակվում են նույն լիազորություններով օժտված նախարարությունների պաշտոնյաներ¹³:
 - ❖ Խորհրդարանի հանձնաժողովներն օրինագծեր մշակելիս համագործակցում են ՔՀԿ-ների հետ: Դրանց ցանկը հրապարակվում է Խորհրդարանի պաշտոնական կայքում: Կազմակերպվում են նաև համատեղ ֆորումներ, համաժողովներ, քննարկումներ՝ ՔՀԿ-ների հետ կարծիքների փոխանակման նպատակով¹⁴:
 - ❖ Գոյություն ունի մասնակցային պորտալ, որում ՔՀԿ-երն ու անհատները կարող են հանդես գալ դիտողություններով, առաջարկություններով, մեկնաբանություններով¹⁵:

ՀՈՆԳԱՐԻԱ

- Օրենքով սահմանված են հանրային մասնակցության հետևյալ ձևերը¹⁶.
 1. Նախարարությունների կայքերում առաջարկություններով, մեկնաբանություններով հանդես գալու հնարավորություն:
 2. Օրինագծերի մշակման համար պատասխանատու նախարարն իր ընտրությամբ դիմում է անհատներին, կառույցներին և կազմակերպություններին՝ առաջարկություններով, մեկնաբանություններով հանդես գալու առաջարկով:
 3. Օրինագծերի մշակման համար պատասխանատու նախարարը կարող է դիմել նաև խորհրդատվության այլ միջոցների:
 - ❖ Խորհրդարանում¹⁷.
 1. Հանձնաժողովները կապեր են հաստատում ՔՀԿ-ների հետ, որոնք կարող են նաև ընդգրկված լինել հատուկ հավատարմագրման գործընթաց անցած «Լոբբիստական կազմակերպությունների ցանկում»:
 2. Հանձնաժողովներն օրինագծերի վերաբերյալ ՔՀԿ-ների հետ կարծիքների

¹⁰<http://hanraincanc.ucoz.org/>

¹¹http://www.riigikogu.ee/index.php?op=ems&page=view_pohiandmed&pid=e4a6a1ea-ace6-53ce-ade0-cacef80ec9d8&http://www.saeima.lv/en/public-participation/coordinators,

¹² OSCE 2010

¹³ OSCE 2010

¹⁴ www.riigikogu.ee

¹⁵ OSCE 2010

¹⁶ Hungary, Act CXXXI of 2010

¹⁷ <http://www.parlament.hu/angol/publicaccess.htm>

փոխա-նակման նպատակով կազմակերպում են բաց դռների օրեր:

3. Նախագահի աշխատակազմում գործում է Հանրային կապերի գրասենյակՔՀԿ-ների հետ խորհրդակցությունները կազմակերպելու և համակարգելու համար:
4. Եռամսյա պարբերականությամբ ՔՀԿ-ներին տեղեկատվություն տրամադրելու նպատակով տպագրվում է հատուկ տեղեկատու, որը հասանելի է նաև առցանց:

ԼԻՏԿԱ

- Գործում է Խորհրդարանի հանձնաժողովների լսումներին և քննարկումներին անարգել մասնակցելու մեխանիզմ¹⁸:
 - ❖ Խորհրդարանի անդամներին, Եվրախնտեզրման և Արտաքին գործերի խորհրդարանական հանձնաժողովներին գրավոր առաջարկություններով դիմելու հնարավորություն¹⁴:

ԼԱՏՎԻԱ

- Խորհրդարանի հետ համագործակցության շրջանակներում ՔՀԿ-ները հանդես են գալիս քննարկվող օրինագծերի վերաբերյալ մեկնաբանություններով և առաջարկություններով, ներգրավվում են խորհրդարանի հանձնաժողովներում որպես փորձագետներ¹⁹:
- Յուրաքանչյուր խորհրդարանական հանձնաժողով ունի Հատուկ նշանակված պաշտոնյաներ, որոնք բաղկացնում են ՔՀԿ-ների հետ համագործակցության համակարգմամբ: Այդ պաշտոնյաների կոնտակտային տվյալները հրապարակվում են խորհրդարանի կայքում^{20,21}:
- Խորհրդարանի հանձնաժողովները օրինագծեր մշակելիս ՔՀԿ-ների հետ կարծիքների փոխանակման նպատակով կազմակերպում են բաց դռների օրեր, համատեղ ֆորումներ, կոնֆերանսներ²²:
- ՔՀԿ-ների հետ համագործակցության հռչակագրի համաձայն ամեն տարի կազմակերպվում է Խորհրդարանի և ՔՀԿ-ների համատեղ ֆորում²³:
- Խորհրդարանի այցելուների տեղեկատվական կենտրոնի անձնակազմը օգնում է գրավոր շարադրելու բանավոր արված առաջարկությունները²⁴:

ՍԼՈՎԱԿԻԱ

- Նախարարություններում և Խորհրդարանում կազմակերպվում են ոչ ֆորմալ հանդիպումներ շահագրգիռ ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:
- Օրինագծերը հրապարակվում են Արդարադատության նախարարության կողմից վերահսկվող կայքում, որը հանրությանը թույլ է տալիս հանդես գալ դրանց վերաբերյալ դիտողություններով, առաջարկություններով, մեկնաբանություններով²⁵:

ԼԵՀԱՍՏԱՆ

- Խորհրդարանում գործում է Խորհրդարանի անդամներից կազմված ՔՀԿ-ների հետ համագործակցության խումբ²⁶:

¹⁸ “The Interaction among State Institutions in the framework of EU-Armenia Integration” 2013

¹⁹ <http://www.saeima.lv/en/public-participation/cooperation-with-ngos-1/>

²⁰ http://www.riigikogu.ee/index.php?op=ems&page=view_pohiandmed&pid=e4a6a1ea-ace6-53ce-ade0-cacef80ec9d8&http://www.saeima.lv/en/public-participation/coordinators

²¹ <http://www.saeima.lv/en/public-participation/cooperation-with-ngos-1/>

²² “The Interaction among State Institutions in the framework of EU-Armenia Integration” 2013, NA of Hungary

²³ <http://www.saeima.lv/en/public-participation/cooperation-with-ngos-1/>

²⁴ <http://www.saeima.lv/en/public-participation/submissions-and-proposals/>

²⁵ Info provided by Milan Andrejkovic, I.SNSC

²⁶ www.ofop.eu

- Սոցիալական քաղաքականության և աշխատանքի նախարարությանը կից գործում է հանրային շահի հանձնաժողով, որում ընդգրկված են ՔՀԿ- ների ներկայացուցիչներ²²:
- Կարիքի դեպքում յուրաքանչյուր նախարարություն կարող է աշխատանքային խմբերում և խորհրդակցական մարմիններում ընդգրկել ՔՀԿ-ների ներկայացուցիչներ²²:
- Տարածքային զարգացման նախարարությունը պարտավոր է օրինաստեղծ գործընթացում ներգրավել ՔՀԿ-ներին: Համագործակցության այս ձևաչափը լավագույնն է ճանաչվել Եվրոպայում²⁷:

ՀԱՅԱՍՏԱՆ

- **Խորհրդարանական լուծումներ և քննարկումներ**

Խորհրդարանական լուծումներին հանրային մասնակցության կարգը սահմանում է ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքը: ՀՀ ԱԺ-ի աշխատակազմի ղեկավարի և ՔՀԿ-ների ոչ ֆորմալ միավորում հանդիսացող «Հանրային ցանցի» միջև 2010թ. ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի հիման վրա ՔՀԿ-ները հնարավորություն ունեն ներգրավվել ԱԺ-ում օրենքների ընդունման գործընթացին, ներկայացնել տեսակետներ, առաջարկություններ, հանդես գալ խորհրդատվական ձայնի իրավունքով, հասարակական հիմունքներով ներգրավվել հանձնաժողովների փորձագիտական խմբերում, հանդես գալ հարակից զեկույցներով:

Ստորագրված հուշագիրը դեռևս համալրված չէ կանոնավոր մասնակցության և խորհրդատվության հստակ սահմանված ընթացակարգերով, որն, անկասկած, նվազեցնում է դրա արդյունավետությունը:

- **ՀՀ վարչապետին առընթեր խորհուրդներ**

ՀՀ վարչապետին առընթեր գործում են գործարարության աջակցման, ներդրումների խթանման, օրենսդրության և վարչարարության կատարելագործման խորհուրդներ, որոնց կազմում ընդգրկված են գործարար շահերը պաշտպանող ՔՀԿ-ների ներկայացուցիչներ:

- **ԱՀՈԾ-ԿԶԾ-ՀԶԾ կառավարման Համակարգող խորհուրդ**

2000թ-ից՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի», 2009թ-ից՝ «Կայուն զարգացման ծրագրի» և 2013թ-ից՝ «Հեռահար զարգացման ծրագրի» շրջանակներում ՀՀ վարչապետի նախագահության ներքո գործող համակարգող խորհուրդը կազմված է 12 նախարարից և 13 ՔՀԿ-ների ներկայացուցից: Այն պետության սոցիալտնտեսական քաղաքականության և ռազմավարական ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքները համակարգող մարմին է, որն ունի նույնատիպ կառուցվածքով Աշխատանքային խումբ: Խումբը ձևավորված է ռազմավարական ծրագրի քաղաքականության մշակման ընթացքում հանրային խորհրդատվության ապահովման նպատակով:

- **Ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդ**

Խորհուրդը ստեղծվել է 2009թ-ին՝ ՀՀ վարչապետի որոշմամբ ՀՀ-ում իրականացվող ազգային երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման, երիտասարդների մասնակցության խթանման նպատակով: Խորհրդի կազմում հավասար թվով ընդգրկվում են երիտասարդության խնդիրներին առնչվող պետական մարմինների և ազգային երիտասարդական քաղաքականության ոլորտում գործող ոչ պետական հատվածի ներկայացուցիչներ:

- **Կանանց հարցերով խորհուրդ**

Խորհուրդը ստեղծվել է 2000թ-ին ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ՀՀ-ում կանանց հիմնահարցերի լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքները համակարգելու նպատակով: Խորհրդի կազմում ընդգրկվել են գործադիր և օրենսդիր իշխանության, ինչպես նաև ՔՀԿ-ների, ստեղծագործական միությունների և մշակույթի ոլորտի առավելաչափ ընկնող կին գործիչներ:

- **ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցության հուշագիր**

2010թ. հունիսի 10-ին ՀՀ դատախազության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ոչ ֆորմալ «Հանրային ցանց» միավորման միջև ոլորտի քաղաքականությունների, օրենսդրական բարեփոխումների, դրանց իրականացման մշտադիտարկման և հանրա-

²⁷ <http://www.eesc.europa.eu/resources/docs/cese-2011-05-en.pdf>

յին իրազեկման նպատակով ստորագրվել է համագործակցության հուշագիր(ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի հանրային փորձաքննություն, առաջարկների ներկայացում ուղղված օրենքի ազատականացմանը, հանրային պաշտպանվածության բարձրացմանը: 2012թ-ի ՀՀ ԱԺ-ի ընտրությունների գործընթացի վերահսկման նպատակով ՀՀ դատախազության մոնիթորինգի խմբերում դիտորդական առաքելությամբ ներգրավվել են Ցանցի անդամ կազմակերպություններ: Հրավիրվել ենք հակա-կոռուպցիոն ծրագրերի տարեկան հաշվետվության նիստերին, ստացել, բայց հրաժարվել դատափորձաքննության խմբում որպես հանրային մոնիթոր հանդես գալու հրավերից՝ ելնելով ցանցի առաքելությանն անհամապատասխանությունից):

➤ **Նախարարությունների քաղաքականությունների մշակման կոլեգիաներ**

Ի կատարումն ԿԶԾՍԳՀայեցակարգի դրույթների՝ ՀՀ կառավարության 20 նոյեմբերի 2008թ. 1/147 նիստի արձանագրային որոշմամբ ստեղծվել և գործում են նախարարությունների քաղաքականությունների մշակման կոլեգիաներ: Նախարարների առաջադրմամբ կամ համաձայնությամբ նրանցում ընդգրկված են ոլորտի խոշոր, հեղինակավոր կամ նախարարության հովանու ներքո գործող ԶՀԿ-ների ղեկավարներ:

Գործում է նաև օրենքների մշակման, լրամշակման նպատակով նախարարություններում, ԱԺ-ում ձևավորված աշխատանքային խմբերում ներգրավվելու ոչ ֆորմալ մեխանիզմ:

II. Ինչպիսի՞ ընթացակարգեր է կիրառում կառավարությունը քննարկման մեջ գտնվող օրինագծերի, դրանց ընթացիկ վիճակի և նախատեսվող հանրային քննարկումների և լուծումների մասին տեղեկատվությունը տարածելու համար:

ԷՍՏՆԻՍ

- Օրինագծի մշակման համար պատասխանատու կառույցը նախապես տեղեկացնում է հանրությանը կարգավորման ենթակա խնդրի մասին²⁸, գրանցում է բոլոր հետաքրքրություն դրսևորած կառույցները, ապա որոշում դրանց ներգրավման ձևաչափը²⁹: Տեղեկատվությունը տարածվում է էլեկտրոնային և ավանդական զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև գրադարանների, տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով³⁰:
- Ստացված առաջարկությունների ամփոփագիրը, ընդունված չլինելու դեպքում, հիմնավորման հետ միասին հրապարակվում է առցանց և ուղարկվում հեղինակներին՝ քննարկման համար նախատեղված 30 օր ժամկետում և Խորհրդարանի ու նախարարությունների պաշտոնական էլեկտրոնային տեղեկատվական կայքեր, պարբերական տեղեկատուներ³¹:
- Գործում է մասնակցային պորտալը³², որում յուրաքանչյուր անձ կարող է հրապարակել ընթացող օրինաստեղծ գործընթացի մասին իր կարծիքն ու մեկնաբանությունը, իսկ նախարարությունները՝ հրապարակել իրենց ծրագրերը, մշակվող օրինագծերը, հարցումներ անցկացնել:³³
- Գործում է Խորհրդարանի տեղեկատվական կենտրոն³⁴:

ՀՈՆԳԱՐԻՍ

- Գործում է hundred thousand electors կայք, որը վերահսկում է տվյալ օրինագծի մշակման համար պատասխանատու նախարարը: Ցանկացած ոք կամ կառույց առանց

²⁸<http://valitsus.ee/en/government/engagement-practices>
²⁹ OSCE 2010, p.33-34
³⁰ OSCE 2010
³¹ OSCE 2010
³²<https://www.osale.ee>
³³<https://www.osale.ee/>, OSCE 2010
³⁴<http://www.riigikogu.ee/index.php?id=34607>

գրանցվելու կարող է տվյալ օրինագծի մասին իր դիտողություններն ու առաջարկությունները ուղարկել էլ.փոստի միջոցով հատուկ նշված հասցեով³⁵:

- Գործում է Հանրային տեղեկատվության կենտրոնական էլեկտրոնային ռեգիստր, որում հրապարակվում են պետական կառույցների մշակած հանրային հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերը: Կայքը տեղեկացնում է ընթացիկ քննարկումների մասին և հղումներ տալիս դեպի համապատասխան պետական կառույցների կայքեր: Կայքը գործում է ոչ առևտրային կազմակերպության՝ Ազգային զարգացման նախարարության համատեղ վերահսկողության ներքո³⁶:
- Օրինագծի համար պատասխանատու նախարարությունը պարտավոր է հրապարակել ստացված առաջարկությունները, մերժվածների դեպքում՝ հիմնավորումների հետ միասին³⁷:

ԼԻՏՎԱ

- Օրինագծի համար պատասխանատու կառույցը պարտավոր է ՋԼՄ-ներում հրապարակել քննարկումների ժամանակացույցը, օրինագծի տեքստին ծանոթանալու կարգը, ուղարկել այն բոլոր շահագրգիռ պետական և ՔՀԿ-ներին և սահմանել դիտողություններով և առաջարկություններով հանդես գալու համար նախատեսված ժամկետը³⁸:

ԼԱՏՎԻԱ

- Երկրի խորհրդարանը տեղեկատվության տարածման համար օգտվում է սոցիալական ցանցերից՝ Facebook, Twitter, YouTube, Flickr³⁹:

ՍԼՈՎԱԿԻԱ

- Օրինաստեղծ գործընթացի մասին ողջ տեղեկատվությունը հրապարակվում է Արդարադատության նախարարության վերահսկողության ներքո գործող հատուկ վեբ պորտալում:^{40,41}

ԼԵՀԱՍՏԱՆ⁴²

- Օրինաստեղծ գործընթացի մասին տեղեկատվությունը տարածվում է նախարարությունների պաշտոնական կայքերի, ինչպես նաև ավանդական մամուլների և ֆաքսի միջոցով:
- Որոշ նախարարություններին կից գործում են ՔՀԿ-ների մասնակցությամբ օրինաստեղծ գործընթացները վերահսկող հանձնաժողովներ:
- Հրապարակվում է Հանրային տեղեկագիր, որում օրինաստեղծ գործընթացի մասին հրապարակումների համար պատասխանատու են նախարարություններ:
- Որոշ նախարարություններ օգտվում են նաև ՀԿ-ների կողմից ստեղծված և վերահսկողվեք կայքից:⁴³

ՀԱՅԱՍՏԱՆ

- Նախարարությունների և ՀՀ ԱԺ-ի պաշտոնական կայքեր,
- Պետական կառույցների ներքո ՔՀԿ-ների ներգրավմամբ գործող հանձնաժողովների, խորհուրդների և աշխատանքային խմբերի քարտուղարության, գլխադասային կառույցների գրավոր կամ էլեկտրոնային տեղեկատվական նյութեր,
- ՔՀԿ միավորումների շրջանակում (օրինակ՝ «Հանրային ցանց») ոչ ֆորմալ համագոր-

³⁵ OSCE 2010, p.35

³⁶ OSCE 2010, p. 37

³⁷ OSCE 2010

³⁸ «The Interaction among State Institutions in the framework of EU-Armenia Integration» 2013

³⁹ «The Interaction among State Institutions in the framework of EU-Armenia Integration» 2013

⁴⁰ Milan Andrejkovic, I.SNSC, contact: andrejkovic@1snsc.sk

⁴¹ <https://lt.justice.gov.sk/Default.aspx?AspxAutoDetectCookieSupport=1>, Milan Andrejkovic, I.SNSC, contact: andrejkovic@1snsc.sk

⁴² www.ofop.eu

⁴³ www.mamzdanie.pl

- ծակցության արդյունքում բացահայտված տեղեկատվության տարածում,
- ՋԼՄ-ներ,

III. Ինչպե՞ս է օրենսդրությունը կանոնակարգում հանրության մասնակցությունը:

ԷՍՏՈՆԻԱ

- Կառավարությունն ու ՔՀԿ-ները ղեկավարվում են «Արդյունավետ ներգրավվածության կանոնակարգ»-ով:

ՀՈՆԳԱՐԻԱ

- Գործում է «Օրենսդրության մշակմանը մասնակցելու մասին» օրենք, 2010 թ.⁴⁴

ԼԻՏՎԱ

- Գործում է «Լոբբիստական գործունեության մասին» օրենք, 2000 թ.⁴⁵
- Խորհրդարանի կանոնակարգը սահմանում է^{46,47}
 1. Հանրային քննարկման ենթակա օրինագծերը պետք է հրապարակվեն պետության կողմից ֆինանսավորվող մամուլում:
 2. Բոլոր շահագրգիռ անձինք և կառույցները պետք է մասնակցեն համապատասխան հանձնաժողովի կազմակերպած լսումներին և քննարկեն ստացված դիտողություններն ու առաջարկությունները:
 3. Ստացված դիտողությունների և առաջարկությունների հեղինակները պետք է հրավիրվեն հանձնաժողովների կազմակերպած լսումներին:

ԼԱՏՎԻԱ

- Մասնակցային գործընթացը կարգավորվում է «Դիմումների ներկայացման մասին» օրենքով⁴⁸: Գրավոր դիմումները կարող են ներկայացվել փոստով, էլ.փոստով, ֆաքսով կամ անձամբ՝ Այցելուների տեղեկատվական կենտրոն: Բոլոր դիմումները քննարկվում են և ըստ դրանց էության պատասխան ստանում:

ՍԼՈՎԱԿԻԱ

«Օրենսդրական ակտերի մշակման կանոնների»⁴⁹ համաձայն.

- Բոլոր հայեցակարգային, ծրագրային և ռազմավարական բնույթի փաստաթղթերը ենթակա են պարտադիր հրապարակման:
- Սահմանված պահանջներին բավարարող անհատական կամ կոլեկտիվ դիտողություններն ու առաջարկությունները ներկայացվում են որոշակի էլեկտրոնային հասցեով կամ թղթային տեսքով:
- Դիմումը ճանաչվում է «սկզբունքային բնույթի», եթե այն ստորագրել է հինգ հարյուրից ոչ պակաս ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Այն պարտադիր քննարկվում է օրինագծի հեղինակի կողմից և պատասխան ստանում ընդունման կամ մերժման հիմնավորման հետ միասին:

⁴⁴<http://www.regulatelobbying.com/>

⁴⁵http://www3.lrs.lt/pls/inter2/dokpaieska.showdoc_e?p_id=167217

⁴⁶http://www.riigikogu.ee/index.php?op=ems&page=view_pohiandmed&pid=e4a6a1ea-ace6-53ce-ade0-cacef80ec9d8&

<http://www.saeima.lv/en/public-participation/coordinators>

⁴⁷ "The Interaction among State Institutions in the framework of EU-Armenia Integration" 2013

⁴⁸ OSCE 2010

⁴⁹ OSCE 2010

- Մերժման դեպքում տեղի է ունենում «համաձայնեցման գործընթաց», որը նախատեսում է հանրության լիազոր ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում: Համաձայնության չհասնելու դեպքում օրինագիծը կառավարությանն է ներկայացվում տարածայնության առիթ հանդիսացող խնդրի հետ մեկտեղ: Օրինագծի հեղինակի նախաձեռնությամբ «համաձայնեցման գործընթաց» կարող է տեղի ունենալ նաև հինգ հարյուրից պակաս ստորագրություն հավաքած առաջարկության շուրջ: «Համաձայնեցման գործընթաց»-ի համար բավարար հիմքերի դեպքում, եթե օրինագծի հեղինակն այն չի կազմակերպում, ապա պարտավոր է հրապարակել այդ կերպ վարվելու պատճառները⁵⁰:

ԼԵՀԱՍՍՆ

- «Իրավական ակտերի լրբինգի մասին» օրենքի համաձայն,⁵¹
- Պետական մարմինները պարտավոր են սպառիչ տեղեկատվություն հրապարակել իրենց քաղաքականության, գործունեության սկզբունքների, մշակվող օրինագծերի, ընդունվող որոշումների մասին:
- Օրենքը չի պահանջում օրինագծերը քննարկման նպատակով հանրությանը ներկայացնելը, սակայն գործնականում որոշակի տիպի փաստաթղթերի դեպքում դա տեղի է ունենում:

ՀԱՅԱՍՍՆ

- Օրենքների ընդունման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության կարգը սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով: Օրենքի համաձայն՝ «Իրավաբանական և ֆիզիկական անձինք իրենց նախաձեռնությամբ իրավունք ունեն մշակել և համապատասխան իրավաստեղծ մարմիններին ներկայացնել նորմատիվ իրավական ակտերի նախագծեր: Իրավաբանական և ֆիզիկական անձանց մշակած օրինագծերն ու ՀՀ ԱԺ-ի որոշումների նախագծերը ՀՀ Սահմանադրության համաձայն, ներկայացվում են օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող անձանց կամ մարմինների կողմից: Իրավաբանական և ֆիզիկական անձանց նախաձեռնությամբ մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակողներն իրավունք ունեն մասնակցել նախագծերի քննարկումներին: ՀՀ ԱԺ-ի քննարկմանը ներկայացված իրավական ակտի նախագծի հեղինակները կարող են մասնակցել համապատասխան նախագծերի քննարկմանը ՀՀ ԱԺ-ի կանոնակարգով սահմանված կարգով: Իրավական այլ ակտերի նախագծերը կարող են հրապարակվել ակտը մշակողների կամ իրավական ակտն ընդունող մարմնի որոշմամբ»:
- Խորհրդարանական լսումներին և հանձնաժողովներինիստերին ՔՀԿ-ների մասնակցության և ներգրավման անհրաժեշտության մասին որոշումը, ինչպես նաև հրավիրվածների ու մասնակցության ցանկություն հայտնաձևների միջև ընտրությունն իրականացնում են համապատասխան հանձնաժողովների նախագահները:
- ՀՀ կառավարության 2012 թ-ի ապրիլի 5-ի նիստի թիվ 13 «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդաբանության ցուցումների մասին» արձանագրային որոշման համաձայն, օրինագծերի հանրային քննարկումների համար նախատեսված է առցանց հանրային քննարկման և նախարարների որոշմամբ՝ առանձին դեպքերում բաց քննարկումների կազմակերպման մեխանիզմ:
- ՀՀ վարչապետին կից խորհուրդների աշխատանքները կարգավորվում են համապատասխան աշխատանքային կանոնակարգերովկամ կանոնադրություններով:
- Նախարարությունների քաղաքականությունների մշակման կոլեգիաները ձևավորվում և ղեկավարվում են «Օրինակելի աշխատակարգով»: Կոլեգիայի կազմն ընտրում է նախարարը՝ ոլորտում գործող փորձառու և հեղինակավոր կամ նախարարության հետ համագործակցող կազմակերպություններից:
- ԿԶԾ/ՀԶԾ Համակարգող խորհուրդն ու Աշխատանքային խումբը ձևավորվում և գոր-

⁵⁰ OSCE 2010 p.37-38,

⁵¹ www.ofop.eu, <http://www.oecd.org/governance/ethics/38944200.pdf>

ծում են Կառավարության 657-Ն որոշման աշխատանքային կանոնակարգով և 2013թ-ի մարտին ՀԶԾ ԲՀՑ միջև ստորագրված համագործակցության հուշագրի համաձայն: Հուշագիրը սահմանում է ՀԶԾ կառավարման ՀԽ-ի ԱԽ-ի անդամների հավասար մասնակցության և որոշումների կայացման գործընթացում ԲՀԿ քվեարկության իրավունք +1 ձայնով:

IV. Ի՞նչ ժամկետներում կառավարությունը պետք է տեղեկացնի հանրությանն օրինագծերի հանրային լուսմների/քննարկումների մասին:

ԷՍՏՆԻԱ

- Խորհրդակցությունների տևողությունը կազմում է առնվազն 4 շաբաթ և կարող է երկարացվել ծավալուն կամ հատուկ նշանակություն ունեցող նախագծերի դեպքում⁵²:

ՀՈՆԳԱՐԻԱ

- Պետական մարմնի կայքում հրապարակման պահից սկսած կարծիքների, մեկնաբանությունների կամ առաջարկությունների համար տրվում է 15 օր⁵³:

ԼԻՏՎԱ

- Լրացումների, առաջարկությունների և դիտողությունների ներկայացման վերջնաժամկետը սահմանում է համապատասխան պետական մարմինը կամ խորհրդարանի հանձնաժողովը⁵⁴:

ԼՍՏՎԻԱ

- Ներկայացված օրինագծերը հասանելի են հանրության համար առնվազն դրանք խորհրդարան ներկայացնելուց 7 օր առաջ: Անհրաժեշտության դեպքում խորհրդարանի նախագահությունը կարող է կրճատել ժամկետը:

ՍԼՈՎԱԿԻԱ

- Հանրությունն օրինագծերը ստանում է կառավարությանը ներկայացնելուց առաջ՝ պետական մարմինների հետ միաժամանակ⁵⁵,
- Դիտողությունների և առաջարկությունների ներկայացման համար սահմանված ժամկետը 15 աշխատանքային օր է՝ սկսած օրինագծի մասին տեղեկատվությունը հրապարակելու պահից: Օրինագծի հեղինակը կարող է սահմանել ավելի երկար ժամկետ⁵⁶:
- Նույնիսկ հրատապ ընդունման կարիքի դեպքում խորհրդակցությունների տևողությունը պետք է լինի առնվազն 7 օր⁵⁷:

ԼԵՀՍՍՏՆ

- «Լոբբինգի և օրինաստեղծ գործընթացին մասնակցության մասին» օրենքի համաձայն⁵⁸ հանրային լուսմների մասին հայտարարությունը հրապարակվում է պատասխանատու նախարարությունների կողմից տպագրվող Հանրային տեղեկագրում առնվազն 7 օր առաջ:

ՀԱՅԱՍՏԱՆ

- ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքով սահմանված կարգի համաձայն՝ կայանալիք լուսմների, հանձնաժողովների նիստերի մասին տեղեկատվությունը 3 օր առաջ հրապարակվում է:

⁵² OSCE 2010

⁵³ OSCE 2010

⁵⁴ OSCE 2010

⁵⁵ OSCE 2010

⁵⁶ OSCE 2010

⁵⁷ OSCE 2010

⁵⁸ www.ofop.eu

րակվում է լրատվամիջոցներով և ԱԺ-ի կայքում:

- ՀՀ վարչապետին կից խորհուրդների նիստերի օրակարգի և ժամանակացույցի մասին Վարչապետի քարտուղարությունը 3-5 օր առաջ տեղեկացնում է խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստով և հեռախոսազանգերով:
- Նախարարությունների քաղաքականությունների մշակման կոլեգիաների աշխատակարգի համաձայն՝ հանրային քննարկման ենթակա օրինագծերի մասին տեղեկատվությունը տեղադրվում է նախարարությունների կայքերում առնվազն 15 օր, երբեմն՝ նաև 1 ամիս առաջ: Բաց քննարկումների մասին տեղեկատվությունը տրամադրվում է 5-7, երբեմն՝ նաև 10 օր առաջ:
- ԿԶԾ/ՀԶԾ Համակարգող խորհրդի ու Աշխատանքային խմբի աշխատանքային կանոնակարգի համաձայն՝ նիստերի մասին տեղեկատվությունը տրամադրվում է 3-5 օր առաջ: Փաստաթղթի վերանայման գործընթացներում ապահովվում է նաև 15-30 օր ժամկետը:

V. Ունի՞ արդյոք հանրությունն օրենսդրական նախաձեռնության իրավունք:

ՀՈՒՆԳԱՐԻԱ

- Երկրի նախագահի, Կառավարության կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հազար քաղաքացու պահանջով խորհրդարանը համազգային հանրաքվե է նշանակում⁵⁹:

ԼԻՏՎԱ

- Սահմանադրության համաձայն՝⁶⁰ ընտրական իրավունք ունեցող երեք հարյուր հազար քաղաքացու պահանջով հանրաքվե է նշանակվում:
- Ընտրական իրավունք ունեցող հիսուն հազար քաղաքացի ստորագրությամբ կարող է օրինագիծ ներկայացնել խորհրդարանին և այն պարտավոր է քննարկել օրինագիծը⁶¹:

ԼԱՏՎԻԱ

- «Ազգային հանրաքվեի, օրենսդրական նախաձեռնությունների, Եվրամիության քաղաքացիական նախաձեռնությունների մասին» օրենքի համաձայն⁶², ընտրական իրավունք ունեցող ոչ պակաս, քան տաս հազար քաղաքացի իրավունք ունի հանդես գալու մշակված օրենսդրական կամ սահմանադրության մեջ լրացում(ներ) կատարելու նախաձեռնությամբ:⁶³

ՍԼՈՎԱԿԻԱ⁶⁴

- Հարյուր հազար ստորագրությամբ քաղաքացիները կարող են մշակված օրինագիծը ներկայացնել Խորհրդարան: Հարյուր հազարից պակաս ստորագրությունների դեպքում օրինագիծը քննարկվում է միայն խորհրդարանի գլխադասային հանձնաժողովներում:
- Երեք հարյուր հիսուն հազար քաղաքացու պահանջով երկրի նախագահը պարտավոր է հանրաքվե նշանակել:

ԻՆՏԱՍՏՆԱ⁶⁵

- Ընտրական իրավունք ունեցող հարյուր հազար քաղաքացի կարող է օրինագիծ ներկայացնել, և խորհրդարանը պարտավոր է դրան ընթացք տալ:

ՀԱՅԱՍՏԱՆ

⁵⁹ The Fundamental Law of Hungary

⁶⁰ <http://www3.lrs.lt/home/Konstitucija/Constitution.htm>

⁶¹ <http://www3.lrs.lt/home/Konstitucija/Constitution.htm>

⁶² <http://web.cvk.lv/pub/public/28862.html>

⁶³ <http://www.saeima.lv/en/legislation/rules-of-procedure>,

⁶⁴ Milan Andrejkovic, 1.SNSC, contact: andrejkovic@1snsc.sk

⁶⁵ www.ofop.eu

- ՀՀ ԱԺ-ի կանոնակարգ օրենքով օրինագիծ ներկայացնելու իրավունքը վերապահված է բացառապես Կառավարությանն ու ԱԺ պատգամավորներին:

**Հայաստանում օրինաստեղծ գործընթացում քաղաքացիական հասարակության իրազեկման
և ներգրավման գործող համակարգի ուսումնասիրություն**

Ուսումնասիրության նպատակն է գնահատել օրինաստեղծ գործընթացում մասնակցային համակարգի կիրառելիության և արդյունավետության մակարդակը, բացահայտել բացթողունները, խնդիրները և զարգացման միտումները, ինչպես նաև նախանշել զարգացմանը նպաստող նոր ուղղություններ:


Հարցումն իրականացվել է հատուկ մշակված հարցաշարի միջոցով: Հարցումն իրականացվել է էլեկտրոնային հարցման եղանակով և մեկնաբանությունների և ճշգրտումների նպատակով անցկացված հեռախոսային հարցման միջոցով: Հարցաշարը հղվել է 18 նախարարության աշխատակազմերի ղեկավարներին, իրավաբանական և հանրային կապերի համար պատասխանատու բաժիններին, ՀՀ ԱԺ-ի 12 մշտական հանձնաժողովին ու 7 խմբակցությանը, «Հանրային ցանցի» անդամ և գործընկեր 500 ԲՀԿ-ին՝ երկշաբաթյա ժամկետում այն լրացնելու խնդրանքով:

Լրացված հարցաթերթերի ընդհանուր թիվը 98 է, որոնցից՝ 20-ը նախարարություններից, 16-ը ՀՀ ԱԺ-ց և 64-ը՝ ԲՀԿ-ներից: Պատասխանների թիվը, սպասվածից ցածր լինելով հանդերձ, բոլոր ներկայացուցչական թիրախ խմբերի համար գտնվում է ±50% շեմի սահմաններում, ուստի դրանց ներկայացուցչականությունն ապահովված է, և հարցման արդյունքները վավերական են:

Տեղին է նկատել, որ ՀՀ ԱԺ-ի, պետական կառույցների և ԲՀԿ-ների հետ «Հանրային ցանցի» համագործակցության փորձը ցույց է տվել, որ հարցախույզին արձագանքելու անբավարար ակտիվությունը պայմանավորված է առավելապես առցանց աշխատանքի մշակույթի ցածր մակարդակով: Ստորև ամփոփ ներկայացված են ըստ հարցաշարի ստացված պատասխանները և դրանց վերլուծությունը:

1. Գնահատեք օրենսդրական նախաձեռնությունների քննարկման գործընթացում քաղաքացիական հասարակության ցուցաբերած ակտիվությունը:

	Պատասխանողների թիվը	%
Գերազանց	2	2,5
Լավ	21	26,6
Բավարար	38	48,1
Անբավարար	14	17,7
Վատ	4	5,1
Ընդհանուր	79	100,0



Հարցման արդյունքների համաձայն օրենսդրական գործընթացում քաղաքացիական հասարակության, այդ թվում նաև ԲՀԿ հատվածի, ակտիվությունը բարձր չէ: Հարցվածների մոտ 23%-ին չի բավարարում քաղաքացիական հասարակության ակտիվության մակարդակը: Սակայն պետք է նշել, որ կողմերի մեկնաբանությունները տարբեր են: Պետական կառույցների ներկայացուցիչները ԲՀԿ ակտիվության մակարդակը գնահատում են՝ ելնելով զուտ մասնակցության կամ առաջարկությունների ներկայացման տեսանկյունից: Մինչդեռ ԲՀԿ ներկայացուցիչները հաշվի են առնում նաև մասնակցության արդյունքում ունեցած ազդեցությունը: Սակայն երկու կողմերի կարծիքները լիովին համընկնում են ԲՀԿ դաշտի կողմից ներկայացվող առաջարկությունների որակի հարցում: Կասկածից վեր է, որ առաջարկությունների ցածր որակը պայմանավորված է ԲՀԿ կառույցների սահմանափակ ռեսուրսներով և հմտություններով: Այս եզրակացությունը հիմնված է ստորև բերված հարցի պատասխանների և դրանց ճշգրտման նպատակով կատարված հեռախոսազանգերից ստացված մեկնաբանությունների վրա:

1.1. Եթե անբավարար կամ վատ, ապա ուշք պատճառը/ները:

		Պատասխանողների թիվը	%
1	Հետաքրքրության պակաս	15	19
2	Անհրաժեշտ տեղեկատվության պակաս	17	21,5
3	Հետադարձ կապի բացակայություն	22	27,8
4	Առաջարկություններով հանդես գալու հնարավորության բացակայություն	8	10,1
5	ՀԿ-ներում համապատասխան մասնագետների պակաս	13	16,5
6	Մարզերից դժվար է ֆիզիկապես ներկա լինել միջոցառումներին	1	1,3

Ըստուսումնասիրությանարդյունքների՝ հարցմանայնմասնակիցները, որոնքօրենսդրական նախաձեռնություններիքննարկմանգործընթացումքաղաքացիականակտիվությունըանբավարար կամվատ են գնահատել, որպեսհիմնականպատճառնշելեն՝


- Հետադարձկապիբացակայությունը՝ 27.8%,
- Անհրաժեշտտեղեկատվությանպակասը՝ 21.5%,
- Հետաքրքրությանպակասը՝ 19%
- ՔՀԿ-ներում մասնագիտական կադրերի պակասը՝ 16.5%,
- Մարզերից Երևան գալու ևքննարկումներին մասնակցելու դժվարությունը՝ 1.3%:

Կողմերի մեկնաբանությունները հետադարձ կապի բացակայության վերաբերյալ դարձյալ տարբեր են: Ըստ պետական կառույցների ներկայացուցիչների՝ պատճառը կայքերում տեղադրված օրինագծերի վերաբերյալ տեսակետների և առաջարկությունների ոչ բավարար հիմնավորված լինելն է: Մինչդեռ ըստ ՔՀԿ-ների ներկայացուցիչների՝ ներկայացված առաջարկությունների և տեսակետների վերաբերյալ պատկան կառույցներից որևէ արձագանքի կամ դրանց ուսումնասիրման, քննարկման ընթացքի մասին տեղեկատվության բացակայությունն է:

2. Օգտվում եք արդյոք պետական կառույցների՝ օրինաստեղծ գործընթացի մասին առցանց իրազեկման գործող համակարգից

	Պատասխանողների թիվը	%
այո	71	89,9
ոչ	8	10,1


Հարցախույզի մասնակիցների մոտ 90% օգտվում են պետական կառույցների օրինաստեղծ գործընթացի մասին ներկայումս գործող առցանց համակարգից:



2.1 Եթե այո, ապա գնահատեք այն

	Պատասխանողների թիվը	%
Լավ	17	21,5
Բավարար	46	58,2
Անբավարար	6	7,6
Դ/պ	2	2,5
Ընդհանուր	71	89,9

Օրինաստեղծգործընթացիմասինտեղեկատվականկայքերիցօգտվողներին մոտ 24%-ը դրանք լավ է գնահատել, 65%-ը՝ բավարար, և միայն 8,5 %՝ անբավարար:



3. Բավարարու՞մ է Ձեզ արդյոք պետական կառույցների կայքերում մշակման, քննարկման կամ ընդունման փուլում գտնվող օրենսդրական նախաձեռնությունների մասին գետեղած տեղեկատվությունը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ								
Մշակման փուլ			Քննարկման փուլ			Ընդունման փուլ		
	Պատասխանողների թիվը	%		Պատասխանողների թիվը	%		Պատասխանողների թիվը	%
այո	11	13,9	այո	40	50,6	այո	40	50,6
ոչ	60	75,9	ոչ	31	39,2	ոչ	31	39,2
Ընդի	71	89,9	Ընդի	71	89,9	Ընդի	71	89,9

Հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությանը (84,5%) մշակման փուլում գտնվող օրենսդրական նախաձեռնությունների մասին ՀՀ ԱԺ-ի արցանց գետեղած տեղեկատվությունը չի բավարարում:

Փոքր-ինչ լավ է վիճակը ՀՀ ԱԺ-ում օրինագծերի քննարկման և ընդունման փուլերում: Այս փուլերում գետեղվող տեղեկատվությունը բավարարում է հարցման մասնակիցների 56,3%-ին և չի բավարարում 43,7%-ին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ								
Մշակման փուլ			Քննարկման փուլ			Ընդունման փուլ		
	Պատասխանողների թիվը	%		Պատասխանողների թիվը	%		Պատասխանողների թիվը	%
այո	12	15,2	այո	28	35,4	այո	22	27,8
ոչ	59	74,7	ոչ	43	54,4	ոչ	49	62,0
Ընդի	71	89,9	Ընդի	71	89,9	Ընդի	71	89,9

Մշակման փուլում գտնվող օրինագծերի վերաբերյալ Կառավարության ու նախարարությունների կայքերում գետեղվող տեղեկատվությունը հարցման մասնակիցների 83,1%-ը անբավարար է գնահատում: Իսկ քննարկման և ընդունման փուլում գետեղվող տեղեկատվությունը բավարար է գնահատում հարցման մասնակիցների համապատասխանաբար 39,4 և 31%-ը, մինչ-դեռ քննարկման փուլում՝ 60,6% իսկ ընդունման փուլում 69%-ին գետեղված տեղեկատվությունը չի բավարարում:

Ստացված արդյունքներն ավելի մտահոգիչ կթվան, եթե հաշվի առնենք Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2012թ-ի ապրիլի 5-ի նիստի թիվ 13 արձանագրային որոշմամբ հաստատված Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդաբանության ցուցումներով սահմանած կարգը, որի համաձայն ՀՀ ԱԺ-ում ներկայացվող օրինագծերը պետք է անպայման անցած լինեն հանրային քննարկման փուլ: Ընդ որում, որպես հանրային քննարկման հիմնական միջոց նախատեսված են նախարարությունների կայքերը, որտեղ օրինագծերը պետք է տեղադրվեն հանրային քննարկման նպատակով առնվազն 15 օր ժամկետով:

Արդյունքում, կարելի է արձանագրել, որ մշակման փուլում, երբ առավել օգտակար է և նպատակահարմար թիրախ խմբերի կարծիքն ու տեսակետը հաշվի առնելը, հանրությունը զուրկ է համապատասխան տեղեկատվություն ստանալու, հետևաբար նաև՝ գործընթացի վրա գործնականում ազդելու հնարավորությունից, ասել է թե, հնարավորություն չունի իրացնել վերը նշված օրենքով սահմանած իր մասնակցային իրավունքը:

Հաջորդ հարցի պատասխանները կհուշեն, թե որոնք են պաշտոնական կայքերում գետեղվող տեղեկատվության թերի լինելու պատճառները:

4. Եթեպետական կառույցների կայքերում մշակման, քննարկման կամ ընդունման փուլում գտնվող օրենսդրական նախաձեռնությունների մասին զետեղված տեղեկատվությունը Ձեզ չի բավարարում, ապա նշեք պատճառը/ները

	Ազգային ժողով	Մշակման փուլ		Քննարկման փուլ		Ընդունման փուլ	
			%		%		%
1	Բացակայում է օրինագծի կարգավիճակի մասին տեղեկատվությունը	9	11,4	4	5,1	4	5,1
2	Բացակայում է օրինաստեղծ գործընթացի ժամանակացույցի մասին տեղեկատվությունը	9	11,4	7	8,9	4	5,1
3	Դժվար է գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը	23	29,1	15	19	13	16,5
4	Տեղեկատվությունը զետեղվում է ուշացումով	13	16,5	13	16,5	9	11,4
5	Չկա հետադարձ կապի հնարավորություն	21	26,6	7	8,9	12	15,2
6	Չկա առաջարկություններով հանդես գալու հնարավորություն	28	35,4	4	5,1	8	10,1

Հարցման մասնակիցների կարծիքով մշակման փուլում օրենսդրական նախաձեռնությունների մասին ՀՀ ԱԺ պաշտոնական կայքում տեղեկատվության զետեղման հետ կապված ամենամեծ թերությունն առաջարկություններով հանդես գալու հնարավորության բացակայությունն է՝ 35,4%: Շատերը՝ 29,1%, գտնում են, որ պաշտոնական կայքերում բարդ է անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելը: Հարցման մասնակիցների 26,6%-ին անհանգստացնում է հետադարձ կապի բացակայությունը, 16,5%-ը արձանագրում է տեղեկատվությունը ուշացումով զետեղելու դեպքեր, իսկ 11,4%-ը որպես թերություն նշում է գործընթացի ժամանակացույցի և օրակարգի մասին տեղեկատվության բացակայությունը:

Ընդհանուր առմամբ, հարցման արդյունքները վկայում են, որ ՀՀ ԱԺ խմբակցություններն ու պատգամավորները օրինագծերի մշակման փուլում բավարար թափանցիկ չեն գործում և անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծում այդ գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավման համար:

Հարցման արդյունքներից ելնելով՝ օրինագծերի քննարկման և ընդունման փուլերում ՀՀ ԱԺ-ն անհամեմատ ավելի թափանցիկ է գործում և այդպիսով նպաստում գործընթացին՝ ՔՀԿ-ների մասնակցությամբ: Այդ փուլերում, որպես մտահոգող, առաջին հերթին նշվում են անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու դժվարությունը՝ 16,5%, և ապա՝ ուշացումով զետեղելը 16,5%: Երկուսն էլ տեխնիկական բնույթի և, թերևս, հեշտ կարգավորվող խնդիրներ են:

Ավելի լուրջ խնդիր է հարցման մասնակիցների նշած հետադարձ կապի բացակայությունը: ՔՀԿ-ների ներկայացուցիչներին շատ է մտահոգում ներկայացրած կարծիքների և առաջարկությունների՝ առանց քննարկման և մերժման հիմնավորման անտեսումը: Դա բացասաբար է անդրադարձնում մի կողմից ժողովրդավարության գործիք հանդիսացող խորհրդարանի հանդեպ հանրության վստահության, և մյուս կողմից՝ շահառուների ձայնը լսելի դարձնելու կոչված ՔՀԿ-ների հեղինակության վրա:

Ըստ պետական կառույցների, սակայն, հետադարձ կապը խորհրդարանական լսումներին, հանձնաժողովների նիստերին ու հանրային քննարկումներին հարցադրումներով, հիմնավորված տեսակետով և պատշաճ կերպով ձևակերպված առաջարկություններով հանդես գալու հնարավորություն է, որից ՔՀԿ-ները բավարար չափով չեն օգտվում:

Հետադարձ կապի խնդրի՝ կողմերի ընկալման տարբերությունն, անկասկած, խոչընդոտում է արդյունավետ համագործակցությունը: Ուստի, անհրաժեշտ է համատեղ քննարկումների միջոցով մշակել մասնակցային կառավարման այնպիսի մեխանիզմ, որը թույլ կտա օրենսդրական գործընթացում համատեղել ՀՀ ԱԺ-ի և ՔՀԿ-ների կարողություններն ու ջանքերը և կնպաստի պետական կառույցների և ՔՀԿ-ների հանդեպ հասարակության վստահության աճին:

Ստորև բերված աղյուսակից երևում է, որ Կառավարության և նախարարությունների դեպքում օրենսդրական նախաձեռնությունների մասին տեղեկատվության զետեղման հետ կապված խնդիրները գրեթե նույն կերպ են մեկնաբանվում, ինչպես ՀՀ ԱԺ-ի դեպքում:

	Կառավարություն, նախարարություններ	Մշակման Փուլ		Քննարկման փուլ		Ընդունման փուլ	
			%		%		%
1	Բացակայում է օրինագծի կարգավիճակի մասին տեղեկատվությունը	6	7,6	6	7,6	5	6,3
2	Բացակայում է օրինագծի ժամանակացույցի մասին տեղեկատվությունը	6	7,6	8	10,1	6	7,6
3	Հեշտչէգտնելտեղեկատվությունը	24	30,4	20	25,3	20	25,3
4	Տեղեկատվությունը զետեղվում է ուշացումով	15	19	15	19	9	11,4
5	Չկա հետադարձ կապի հնարավորություն	11	13,9	7	8,9	8	10,1
6	Չկա առաջարկություններով հանդես գալու հնարավորություն	29	36,7	16	20,3	27	34,2


Ստացված արդյունքներից երևում է, որ Կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում օրինագծերի քննարկման և ընդունման փուլում, ինչպես և ՀՀ ԱԺ-ի դեպքում, տեղեկատվության զետեղման հետ կապված խնդիրներից կարևորագույնը մնում է առաջարկություններով հանդես գալու հնարավորության բացակայությունը: Դա այն դեպքում, երբ հենց նախարարությունների պաշտոնական կայքերն են օրենքով կոչված ապահովելու օրինաստեղծ գործընթացում քաղաքացիական հասարակության լիարժեք մասնակցությունը:

Ստացված արդյունքներից հետևում է, որ Կառավարությունն ու նախարարություններն օրինագծերի մշակման, քննարկման և ընդունման փուլերում բավարար չափով չեն ապահովում քաղաքացիական հասարակության լիարժեք մասնակցությունը, չնայած օրենքի պահանջին՝ օրինաստեղծ գործընթացից հեռու պահելով հանրությունը:

5. Տեղյակ եք արդյոք հանրային քննարկման նպատակով օրենսդրական նախաձեռնությունների մասին տեղեկատվության առցանց զետեղման ընթացակարգի գոյության մասին

	Պատասխանողների թիվը	%
այո	35	44,3
ոչ	44	55,7
Ընդի.	79	100,0

Արդյունավետ մասնակցային կառավարման համար անհրաժեշտ նախապայմանը հանրությանը անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու համակարգի առկայությունն է և այդ համակարգի միջոցով տեղեկատվությունը ստանալու



հնարավորության մասին հանրության տեղեկացված լինելը: Վերոնշյալ հարցի միջոցով խնդիր է դրվել պարզել, թե որքանով են ՔՀԿ-ները տեղյակ հանրային քննարկման նպատակով օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության առցանց զետեղման ընթացակարգի գոյության մասին: Հարցման արդյունքներից հետևում է, որ մասնակիցների գերակշիռ մասը՝ մոտ 56%, տեղյակ չէ հանրային քննարկման նպատակով օրենսդրական նախաձեռնությունների մասին տեղեկատվության առցանց զետեղման ընթացակարգի գոյության մասին:

Ստացված պատկերը լուրջ մտահոգության առիթ է տալիս: Այն կրկին անգամ վկայում է պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև հաստատուն և կառուցողական համագործակցության նախապայմանի՝ փոխվստահության բացակայության մասին: ՔՀԿ-ները պատրաստ չեն կամ չեն վստահում պետական կառույցների բաց և թափանցիկ


աշխատառճին, իսկ պետական կառույցները, թերագնահատելով մասնակցային գործընթացի կարևորությունը, բավարար ջանքեր չեն գործադրում ՔՀԿ-ներին օրինաստեղծ գործընթացում լիարժեք ներգրավելու ուղղությամբ՝ խնդրին տալով լոկ ձևական լուծում:

Անշուշտ, տեղեկատվությունը ստանալու խնդիրը, երբեմն, զուտ տեխնիկական բնույթ է կրում՝ կապված կայքերում այն գտնելու դժվարության կամ դրա համար անհրաժեշտ հմտությունների պակասի հետ: Սակայն, տեղյակ չլինելով տեղեկատվության տրամադրման պարտադիր պահանջի մասին, ՔՀԿ ներկայացուցիչները չեն էլ փորձում տեխնիկական խոչընդոտները հաղթահարելու ուղղությամբ որոշակի քայլերի դիմել և հանդես գալ պահանջատիրոջ դիրքերից, որպեսզի տրամադրվող տեղեկատվությունն իրենց համար առավել մատչելի ու հասանելի դառնա:

Հաջորդ մի քանի հարցերի նպատակն էր պարզել, թե ըստ օրենսդրական նախաձեռնությունների մասին տեղեկատվության տրամադրման ընթացակարգի մասին տեղյակ հարցման մասնակիցների ինչպիսի՞ն է այն: Ավելորդ չենք համարում նշել, որ հարցումն իրականացվել է առցանց, ուստի պատասխանողներն են եղել պետական կառավարման մարմինների և ՔՀԿ-ների առավել ակտիվ, տեղեկացված և համակարգչային ռեսուրսներից օգտվելու հմտություններ ունեցող ներկայացուցիչները:

5.1 Եթե տեղյակ եք, ապա նշեք, թե քննարկումներից որքա՞ն ժամանակ առաջ է տեղեկատվությունը տեղադրվում պաշտոնական կայքերում

	Պատասխանողների թիվը	%
1շաբաթ	14	41,2
Մի քանի օր	4	11,8
30օր	3	8,8
12 օր	3	8,8
15 օր	2	5,9
դ/պ	8	23,5
Ընդի.	34	100,0




Ըստ պատասխանողների մեծ մասի՝ 41.2%, տեղեկատվությունը պաշտոնական կայքերում տեղադրվում է մեկ շաբաթ առաջ, 23,5%-ը դժվարացել է պատասխանել:

5.2. Ձեռտեղվում է արդյոք քննարկումների ժամանակացույցը

	Պատասխանողների թիվը	%
այո	27	79,4
ոչ	3	8,8
դ/պ	4	11,8
Ընդի.	34	100,0

Հարցին պատասխանողների գերակշիռ մասը՝ 79.4%, վկայում է քննարկումների ժամանակացույցի զետեղման մասին:




* Հարցաթերթիկում ոչ բոլոր հարցերն են պատասխանվել, ուստի հատուկ ծրագիրը, որը

մուտքագրած տվյալների հիման վրա կատարել է արդյունքների հաշվարկը տալիս է մոտավոր ճշգրտության տոկոս, որը կոչվում է ճշգրտված %

5.3. Նախատեսված է առցանց առաջարկություններով հանդես գալու հնարավորություն

	Պատասխանողների թիվը	%
այո	16	45,7
ոչ	16	45,7
դ/պ	3	8,6
Ընդհ.	35	100,0




Այս հարցին պատասխանողների ծայրերը հավասարաչափ բաշխվել են դրական և բացասական պատասխանների միջև՝ 45,7%:

Ստացված պատասխաններից կարելի է եզրակացնել, որ օրենսդրական նախաձեռնությունների մասին տեղեկատվությունն առցանց զետեղող պաշտոնական ոչ բոլոր կայքերն են նախատեսել առաջարկություններով հանդես գալու հնարավորություն: Կասկած չկա, որ նման հնարավորության բացակայությունը գրեթե լիովին արժեզրկում է տրամադրվող տեղեկատվությունը, չի խթանում օրինաստեղծ գործընթացում քաղաքացիական հասարակության ակտիվությունը և չի նպաստում մասնակցային կառավարման համակարգի կայացմանը:

5.4. Նախատեսված է արդյոք հետադարձ կապի հնարավորություն

	Պատասխանողների թիվը	%
այո	14	45,7
ոչ	16	45,7
դ/պ	4	8,6
Ընդհ.	34	100,0

Հարցին պատասխանները՝ 47,1% «ոչ» և 41,2% «այո», կրկին անգամ վկայում են որոշ պաշտոնական կայքերում տեղեկատվության զետեղման վերաբերյալ օրենքի պահանջի զուտ ձևական կողմը



ապահովելու մասին:


Հետադարձ կապի բացակայությունը և բացասաբար է անդրադառնում

քաղաքացիական հասարակության ակտիվությանն մասնակցային կառավարման համակարգի կայացման վրա:

6. Նպատակահարմար էք գտնում արդյո՞ք օրենսդրական նախաձեռնությունների մասին հասարակության համար մատչելի պաշտոնական կայքերի՝ միասնական սկզբունքներով և ձևաչափով կազմակերպումը

	Պատասխանողների թիվը	%
այո	72	91,1
ոչ	7	8,9
Ընդհ.	79	100,0

Հարցման արդյունքները վկայում են, որ մասնակիցների 91%-ը նպատակահարմար է գտնում օրինաստեղծ գործընթացի մասին հասարակությանը տեղեկատվություն տրամադրող ԱԺ-ի և նախարարությունների պաշտոնական կայքերի՝ միասնական սկզբունքով և ձևաչափով կազմակերպումը:




թյունների պաշտոնական կայքերի՝ միասնական սկզբունքով և ձևաչափով կազմակերպումը:

7. Կցանկանա՞ք բաժանորդագրման ռեժիմով տեղեկություն ստանալ նախարարությունների և ԱԺ-ի մշտական հանձնաժողովների ընթացիկ օրինաստեղծ գործունեության մասին

	Պատասխանողների թիվը	%
այո	65	82,3
ոչ	14	17,7
Ընդհ.	79	100,0

Հարցման մասնակիցների 82,3% հավանություն են տվել բաժանորդագրման ռեժիմով ոլորտային նախարարություններից և ԱԺ-ի մշտական հանձնաժո-




ղովներից ընթացիկ օրինաստեղծ գործունեության մասին տեղեկացվելու հնարավորությամբ:

8. Նպատակահարմար էք գտնում արդյոք, որ ՔՀԿ-ների առաջարկությունները առցանց հասանելի լինեն օրինաստեղծ գործընթացում ներգրավված կառավարության աշխատանքային խմբերի և ԱԺ-ի մշտական հանձնաժողովների համար

	Պատասխանողների թիվը	%
այո	75	94,9
ոչ	4	5,1
Ընդհ.	79	100,0

Այս հարցին դրական է արձագանքել հարցման մասնակիցների բացարձակ մեծամասնությունը՝ 94,9%:



Օրինաստեղծ գործընթացում ներգրավված պետական կառույցների համար ՔՀԿ-ների առաջարկությունների առցանց հասանելի լինելը կարող է ծառայել որպես նոր օրենսդրական գաղափարների և քաղաքականությունների շտեմարան, իսկ քաղաքացիական հասարակության համար՝ իր կառույցների հասունության և ակտիվության չափանիշ:

Վերջին երեք հարցերի պատասխանները հուշում են պետական կառույցների պաշտոնական կայքերը հանրության համար հասանելի, մատչելի ու մասնակցային կառավարման առումով կիրառելի դարձնելու ուղղությամբ առաջնահերթ անելիքները:

Գ. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով օրենքների ընդունման գործընթացում Կենտրոնական Եվրոպայի, Մերձբալթյան երկրներում և Հայաստանում գործող մասնակցային համակարգերի կիրառելիության ուսումնասիրությունը, համեմատական վերլուծությունը և ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները՝ կարելի է արձանագրել, որ ֆորմալ առումով դրանք գրեթե չեն տարբերվում: Հայաստանում օրենքների ընդունման գործընթացում հանրային մասնակցության համար ստեղծված են ինստիտուցիոնալ լուրջ մեխանիզմներ, որոնք իրենց ձևաչափով, կառուցվածքով և գործառույթներով նման են Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներում կիրառվող մոդելներին: Ավելին, դրանք ամրագրված են և կարգավորվում են օրենսդրորեն, սակայն կիրառման առումով առկա են լուրջ խնդիրներ: Այս եզրահանգման համար հիմք են հանդիսանում օրենսդրական նախաձեռնությունների քննարկման գործընթացում քաղաքացիական հասարակության ցածր ակտիվության և օրենսդրական նախաձեռնությունների հանրային քննարկման մասին տեղեկատվության զետեղման ընթացակարգերից ՔՀԿ-ների տեղյակ չլինելու մասին վկայող հարցման արդյունքները:

Հաշվի առնելով այն, որ հարցումն իրականացվել է առավել ակտիվ ՔՀԿ-ների շրջանում, կարելի է եզրակացնել, որ չնայած ֆորմալ հնարավորությունների առկայությանը՝ հանրային մասնակցությունը մեզանում ցածր մակարդակի վրա է և բարելավման լուրջ խնդիր ունի:

Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներում օրենքների ընդունման գործընթացում հանրային մասնակցությունն ապահովելու նպատակով պետական կառույցների կազմում գործում են մասնագիտացված ստորաբաժանումներ, գրասենյակներ կամ գոնե հատուկ հաստիքներ, որոնք համակարգում են քաղաքացիական հասարակության բոլոր հատվածների հետ հետադարձ կապը և տեղեկատվության փոխանակման աշխատանքները: Հայաստանում նույնպես նախարարությունների, գործակալությունների ԱԺ-ի կազմում ձևավորված են հանրային կապերի բաժիններ, սակայն գործառույթների առումով դրանք լրիվ այլ են: Ի տարբերություն Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներում գործողների՝ Հայաստանում հասարակայնության հետ կապերի բաժինները հիմնականում աշխատում են լրատվամիջոցների հետ և պատասխանատու են կառույցի պաշտոնական կայքերի սպասարկման համար:

Հայաստանում մյուս քան չլուր պետական կառույց պաշտոնական տեղեկատվության տարածման համար օգտվում է թղթային, լրատվամիջոցներով իրագեկման, ինչպես նաև կայքերում տեղեկատվության զետեղման միջոցներից: Սակայն տեղեկատվության տրամադրման ընդհանուր սկզբունք և ձևաչափ գոյություն չունի: Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներում առավել կիրառելի են դարձել առցանց տեղեկատվական կայքերը, ընդ որում

դրանցաշխատանքը հաճախ համակարգում և սպասարկում է մեկ կառույց, օրինակ՝ Արդարադատության նախարարությունը, հատուկ ստեղծված գրասենյակը կամ նույնիսկ քաղաքացիական հասարակության որևէ մի կազմակերպություն: Այս կայքերի նպատակն է լրացնել գոյություն ունեցող մասնակցային խորհրդատվության այլ միջոցները, հնարավորություն տալ անհատներին և ՔՀԿ-ներին ընթացիկ գործընթացների մասին մեկնաբանություններ անել, կարծիք հայտնել, հանդես գալ առաջարկություններով: Պետական կառույցները հաճախ հանրությանը ներկայացնում են իրենց տարեկան աշխատանքային պլանը, մշակվելիք օրինագծերը, դրա համար հիմք հանդիսացող նյութերը:

Առանձնապես ուշագրավ է Լատվիայի և Լեհաստանի փորձը: Այստեղ իրավասու նախարարությունը մշակված օրինագծի հանրային քննարկման ընթացքում պարտավոր է մեկ առ մեկ հաշվի առնել ստացված դիտողություններն ու առաջարկությունները և դրանց վերաբերյալ մեկնաբանություններն ու ընդունված կամ մերժված լինելու մասին տեղեկատվությունն ամփոփ ներկայացնել իր կայքում:

Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրների փորձը հուշում է, որ Հայաստանում մասնակցային կառավարման համակարգի զարգացման համար, նախ և առաջ անհրաժեշտ է օրինաստեղծ գործընթացում ՔՀԿ-ների համար ապահովել հետադարձ կապի և առաջարկություններով հանդես գալու հնարավորություն:

Ստորև ամփոփ բերված են ուսումնասիրության արդյունքում ձևավորված մասնակցային կառավարման համակարգի զարգացմանն ուղղված այն առաջարկությունները, որոնք ներկայացվելու են ՀՀ կառավարությանը և ԱԺ-ին:

- ❖ ՀՀ ԱԺ-ի կազմում ձևավորել խորհրդարանի անդամներից կազմված ՔՀԿ-ների հետ համագործակցության խումբ:
- ❖ Կառավարության աշխատակազմի ներքո հիմնել հանրային կապերի գրասենյակ, որը պատասխանատու կլինի ՔՀԿ-ների հետ համագործակցությունը կազմակերպելու, համակարգելու և մշտադիտարկելու համար:
- ❖ Նույն լիազորություններով օժտված գրասենյակներ հիմնել նախարարությունների աշխատակազմերի ներքո:
- ❖ ԱԺ-ի և Կառավարության պաշտոնական կայքերում ձևավորել հետադարձ կապի հնարավորություններն ապահովող մասնակցային պորտալներ, ուր քաղաքացիներն ու ՔՀԿ-ները կարող են հանդես գալ օրինագծերի վերաբերյալ դիտողություններով, մեկնաբանություններով և առաջարկություններով:
- ❖ Խստացնել ՀՀ ԱԺ ներկայացվող օրինագծերի ներքին կարծիքն ու մեկնաբանությունները կցելու պահանջը:
- ❖ Ձևավորել քաղաքացիական հասարակության՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավական հիմքը:

Ուսումնասիրության արդյունքում եղել են նաև մասնակցային գործընթացի կատարելագործմանն ուղղված մի շարք տեխնիկական բնույթի առաջարկություններ:

Դրանք են.

- ❖ Կառավարության, նախարարությունների և ՀՀ ԱԺ-ի օրինաստեղծ գործունեության մասին տեղեկատվություն զետեղող պաշտոնական կայքերը ձևավորել միասնական սկզբունքներով և ձևաչափով:
- ❖ Մշակել և ներդնել օրինաստեղծ գործընթացի մասին ՔՀԿ-ներին բաժանորդագրման ռեժիմով տեղեկացնելու մեխանիզմը:
- ❖ Օրինագծերի և պետական քաղաքականություններն ամրագրող փաստաթղթերի հանրային քննարկման համար սահմանել ոչ պակաս, քան՝ 15-օրյա ժամկետ:

ՄԱՍ 2



CIM փորձագետ Լենարտ Լեհման

- I. Ինչպիսի՞ մեխանիզմներ են կիրառում Կենտրոնական Եվրոպայի երկրները նպաստելու համար ԶՀԿ-ների մասնակցությանը օրինաստեղծ գործընթացին:

ԷՍՏՈՆԻԱ

- ❖ *Խորհրդարանի քաղաքացիական հասարակության աջակցության խումբ.*
 Էստոնիայի Riigikogu/խորհրդարանում կա քաղաքացիական հասարակության աջակցության խումբ՝ կազմված խորհրդարանի անդամներից, և որի հանձնարարությունն է քաղաքացիական հասարակության կայացմանն անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ.⁶⁶
- ❖ *Հատուկ պետական պաշտոնյաների համակարգման, մոնիթորինգի և խորհրդատվության համար*
 Մյուս երկրների շարքում Էստոնիան առաջարկում է յուրաքանչյուր պետական մարմնում հատուկ պետական պաշտոնյաների ձևավորումը, որոնք կհամակարգեն և կգնահատեն խորհրդակցության գործընթացը՝ ապահովելու համար սահմանված օրենքի կամ կոդի համաչափ կիրառումը և համապատասխանությունը.⁶⁷
- ❖ *Նախարարությունների նշանակված պաշտոնյաները*
 Ամեն նախարարություն նշանակում է պաշտոնյաների, որոնց անմիջական պարտականությունն է ներգրավել հանրությանը որոշումների կայացման գործընթացներում:

